ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 հուլիսի 2018 թվականի N 68-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N202-Ն որոշմամբ հաստատված կարգը,

ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

11.07 2018

X

VERIFIED OCSP 11.07 2018 10:53 31 GMT+4

Подписано: HAMBARDZUMYAN KAREN 2611820473

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ. հուլիսի 2-ի N 68-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների գումարի չափը

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	ՀՀ 2018թ. պետական բյուջե վճարման ենթակա շահաբաժնի գումարն՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	5,324,200.00
2	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	-
3	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ	45,700.00
4	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	17,500.00
5	«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	106,000.00
6	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ	86,000.00
7	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	122,700.00

Աշխատակազմի ղեկավար **Ռ.Սարգսյան**